ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	§Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	«Անբասիր ծառայության համար» մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24 (շեղումը՝ +/- 1մմ), որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուարե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի երկու եզրերով անցնում են կանաչ՝ 1 մմ, կարմիր՝ 3 մմ և դեղին՝ 1 մմ լայնությամբ իրար հաջորդող զոլակներ: «Անբասիր ծառայության համար» մեդալի տրամագիծը 38 մմ է (շեղումը՝ +/- 1մմ): Արտադրվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և ոսկեպատվում 999 հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Մեդալի հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Մեդալը երկու կողմից եզրագծված է 1մմ

				լայնությամբ և 1 մմ բարձրությամբ շրջանակով: Մեդալի դիմային երեսը եզրազարդված է 1.81 մմ լայնությամբ հավերժության ռելիեֆային խորհրդանիշով: Հավերժության խորհրդանիշի ներսի եզրային հատվածին զուգահեռ առկա է «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» շրջանաձև գրությունը: Մեդալի կենտրոնում տեղակայված է հավասարակողմ եռանկյունը, որը քաղաքացիական պաշտպանության խորհրդանիշն է: Եռանկյան կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: «Անբասիր ծառայության համար» մեդալի դարձերեսի կենտրոնական մասում երեք շարքով 6.32 տառաչափով առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» լազերային փորագրությամբ հայերեն գրությունը: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 001-ից): Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
11				